

ՀԱՅԿ ՄԵԼՔՈՆՅԱՆ

(Պատմական գիտությունների թեկնածու)

ՀԱՅ ԹՈՎՄԱՍԻ ԱՍՈՐԱԿԱՆ ՎԱՐՔԸ¹

6-րդ դարի առաջին կեսի հայ ազգի այս գործչի մասին մեր մատենագիրները ոչինչ չեն գրել և այժմ Թովմասի Վարքի ասորերեն բնագրից իմանում ենք, որ նա եղել է պետական գործիչ և ապա, հրաժարվելով այդ պաշտոնից, միացել է ճգնափորական շարժմանը: Վարքի մեջ բազմաթիվ հրաշապատում նկարագրությունները որոշ չափով մթագնում են Թովմասի իսկական կերպարը, բայց հիմքում այն պատմական է և ունի արժեքավոր փաստեր:

6-րդ դարում վերսկսվում են Բյուզանդիայի և Սասանյան Պարսկաստանի միջև պատերազմները: Երկու այս տերությունների սահմաններում, հատկապես Բյուզանդական կայսրության ներսում վերսկսվում են նաև կրոնական վեճերն ու հալածանքները, որոնք քայքայում են երկրի ներքին ուժերը: Հուստինիանոս կայսրը (527—565) միջոցներ է որոնում, որպեսզի կարողանա գործել ու միաձույլ կայսրություն ստեղծել, և այդ նպատակով դիմում է գործնական միջոցառումների. դրանցից մեկն էլ լինում է այն, որ Բյուզանդական Հայաստանում վերացնում են տեղական առանձնահատկություններն ու կարգերը. վարչա-քաղաքական վերակազմության է ենթարկում այն և հայ նախարարներին էլ զրկում իրենց իրավունքներից: 387 թ., Հայաստանի բաժանումից

հետո, Բյուզանդական կայսրության գերիշխանության ներքո գտնվող Մեծ Հայքի հարավային մասերում իշխում էին հինգ հայ նախարարներ կամ սատրապներ², որոնք ունեին իշխանության հաջորդականության իրավունք: Ջենոն կայսրը (477—491), սակայն, բացի Բալահովտի հայ նախարարից³, մյուս չորսին զրկում է այդ իրավունքից, մինչև որ Հուստինիանոս Ա կայսրը 536 թ. վերջնականապես վերացնում է հայկական այս իշխանությունները և, երկրամասի վարչա-քաղաքական վիճակը արմատապես փոխելով, դարձնում է կայսրության նահանգ, կոչելով՝ Չորրորդ Հայք:

Թովմասի ասորերեն վարքը գրել է 6-րդ դարի հայտնի ասորի պատմիչ Հովհան Եփեսացին, որը Թովմասին ժամանակակից

² Հարավային մասը կազմում էր հինգ նախարարություններ կամ սատրապություններ՝ Ծոփք Մեծ (ընդգրկում էր՝ Անգեղտուն և Նփոնտ գավառները), Ծոփք փոքր (Ծոփք Ծափունի), Անձիտ, Բալահովտ, Հաշտունք: Տե՛ս, Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1968, էջ 24:

³ Բալահովտ գավառը համընկնում է այժմյան Բալուի շրջանին, որը տարածվում է Արևելյան Եփրատի հովտում՝ Շապաղաշի և Խարբերդի միջև: Դաշտացին գավառ է: Ունի արգավանդ հողեր:

Գավառի նշանավոր վայրը Բալու բերդն էր, որն այժմ էլ գոյություն ունի իբրև փոքր քաղաք և գտնվում է Արևելյան Եփրատի աջ ափին: Տե՛ս, Թ. Հակոբյան, Ուրվագծեր Հայաստանի պատմական աշխարհագրության, Երևան, 1960, էջ 232:

¹ John of Ephesus, „Lives of the Eastern Saints“ ed. E. W. Brooks, „Patrologia Orientalis“, t. 17, Paris, 1923, p. 283.

է եղել և անձամբ էլ երկար ժամանակ կտայ է ունեցել նրա հետ: Ինչպէս աստուծոյն աչքը հանգամանքը օգնել է, որ հեղինակը հետաքրքրական տեղեկություններ հաղորդի ոչ միայն Թովմասի, այլ նաև նույն այդ ժամանակի դէպքերի ու իրադարձությունների մասին:

Թովմասի հայր՝ Ծնգի(ն)⁴ 6-րդ դարի առաջին քառորդին Բյուզանդական Հայաստանում իշխող հայ անվանի աստրապներից էր և որովհետև, ինչպես վկայում է Թովմասի Վարքը, դեռ նա պահպանում էր իր իշխանության հաջորդականության իրավունքը, ուստի Վարքի ասորերեն բնագրի հրատարակիչ Բրուկլը ենթադրել է, որ նա Բալահովտի իշխանը կամ աստրապն էր⁵: Մայրը հայ արշակունի թագավորների ցեղից էր: Ծնգի(ն)ը իր խելացի ղեկավարությամբ կարողացել է ոչ միայն մեծ հեղինակություն ձեռք բերել երկրում, այլև ընդարձակել իր իշխանության սահմանները: Վարքում պատմված է, որ նա ձգտել է որդուն տալ իր ժամանակի լավագույն կրթությունը և այդ նպատակով Թովմասին ուղարկել է սովորելու մշակույթի խոշոր կենտրոններում: Վերադարձին հայրը այս անգամ որդուն ծանոթացնում է վարչական գործերին, որպեսզի վերջինս իր մահից հետո շարունակի իր գործը:

Թովմասը հոր մահից հետո, նկատի ունենալով, որ վարչական աշխատանքը մարդուն տանում է անարդարությունների ու աղքատներին կողոպտելու ճանապարհը, գնում է Կոստանդնուպոլիս և կայսրին համոզում է, որ իրեն ազատեն այդ պարտականությունից. այսպիսով նա հրաժարվում է վարչական գործից և վերադառնում տուն ու սկսում վաճառել իր ունեցվածքն ու հարստությունը և ստացված գումարը բաժանում է կարիքավորներին, թշվառներին:

Վարքագիրը Թովմասի այս քայլը հիմնականում ներկայացնում է որպես կրոնական զգացումներից միայն թելադրված, սակայն մանրամասնությունների հետ ծանոթանալիս տեսնում ենք, որ Թովմասը գործում է նաև ընկերային, մարդասիրական սկզբունքներից հետևելով: Նա իր հոր հարստության մասին հետևյալ կերպ է արտահայտվում, որ «այս բոլորը նա (հայրը) կուտակել է ոչ

թե արդար կամ իրավացի ճանապարհով, այլ աղքատին կողոպտելով ու խաբելով»: Թովմասը գտնում է, որ հասարակության հիմքում ընկած անարդարությունների պատճառը հարստությունն է, ուստի բաժանում է իր ունեցվածքը և սկսում է ապրել ճգնափորությամբ: Նա իր պաշտոնից ու ունեցվածքից հրաժարվում է ոչ միայն միայնության մեջ իր հոգու փրկությունը որոնելու, այլ նաև նա այդ միջոցով մտնում է հասարակության ցածր խավերի շրջապատը, սկսում է կազմակերպել և ղեկավարել նրանց պայքարը բյուզանդական կայսրության դեմ:

Թովմասը հասկանում էր, որ շարժումը բարձր հիմքի վրա դնելու համար անհրաժեշտ է հետևորդներին ուսուցանել և ծանոթացնել գրականության՝ հայտնի հայրերի գործերին. ուստի այդ նպատակով նա ճանապարհորդում է և հասնում մինչև Ալեքսանդրիա, այստեղից իր դրամական միջոցներով գնում բազմաթիվ գրքեր ու վերադառնում է: Թովմասը իր կապը չի խզում նաև ժողովրդի հետ և երբ 536 թ. կայսրի հրամանի համաձայն փոփոխություն էին մտցնում երկրում և հակաքաղկեդոնականության պայքարի նշանաբանով կայսրության գործակալները սկսում էին հալածել հայերին ու ասորիներին, նա առաջիններից էր, որ հակադրվեց բյուզանդացիներին և, իր շուրջ հավաքելով համակիրների մի մեծ խումբ, ղեկավարեց շարժումը:

Կայսրն ու իր համախոհները իրենց տերության սահմաններում կրոնական հալածանքները մտածված ձևով էին կազմակերպում, որովհետև քաղաքական ինքնուրույնությունից զրկված հայերի ու ասորիների ինքնապահպանման և ազգային ուժերի միասնական գործունեության ու ամրապնդման գլխավոր միջոցը այն ժամանակ հանդիսանում էր իրենց եկեղեցին: Ահա, բյուզանդացիները այս ժողովուրդների դիմադրության վերջին պատնեշը վերացնելու նպատակով նրանց պարտադրում են Քաղկեդոնի ժողովի որոշումները, որովհետև հայերը, ինչպես նաև միաբնակ այլ տարրերը այն ժամանակ իրենց հակաբյուզանդական ելույթները հիմնականում կազմակերպում էին նաև հակաքաղկեդոնականության դրոշի ներքո:

Դեռ 451 թվի մայիսի 17-ին Մարկիանոս կայսրի հատուկ հրովարտակով գումարվում էր Քաղկեդոնի ժողովը:

451 թվի հոկտեմբերի 8-ին սկսվում է ժողովը. առաջին իսկ նիստից զգացվում է, որ կայսրը դիմել է արտակարգ միջոցների և ձգտում է գործել նախօրոք կազմված ծրագրի համաձայն. հրավիրված էին հատուկ զինվորական ջոկատներ, որոնք հսկում էին

⁴ Ասորերեն գրված է „Տոց“ Հ. Աճառյանը իր «Անձնանունների բառարան»-ում նշում է «Ծնգին Արծրունի» անունով մեկի մասին, որը Հազկերտ Բ-ի հրամանով բանտարկված նախարարներից էր 452 թ. (Նոյիշե, 150, Փարպեցի ԽԷ), տես «Անձնանունների բառարան», հտր. 9, էջ 171:

⁵ John of Ephesus, Lives of Eastern Saints, p. 284.

ծողովի ընթացքի վրա և անգամ հարկ եղած դեպքում միջամտում. նիստերը ղեկավարում էին կառավարական պաշտոնյաները և թելադրում իրենց կամքը:

Նույնների մեկին ժողովը փակվում է և ժողովականները վերադառնում են իրենց տեղերը. սակայն, կրքերը հանդարտվելու փոխարեն ավելի են բորբոքվում: Կայսրի եկեղեցական քաղաքականությունից դժգոհ տարրերը համախմբվում են հակաքաղկեդոնական դրոշի ներքո և ուժեղացնում պայքարը: Պետք է ասել, որ այդ պայքարը երկար է տևում: Հակաքաղկեդոնականությունը միշտ էլ միաբնակ եկեղեցիների համար բյուզանդական կայսրությանն ու եկեղեցու ազդեցությանը հակադրվելու գաղափարախոսություն է եղել:

Հայ եկեղեցին հայ ժողովրդի հետ միասին 451 թվականին Ավարայրում գոյության պայքար էր մղում ընդդեմ պարսիկների: Բնական է, որ այդ պայմաններում նա ի վիճակի չէր մասնակցելու ժողովին և երկար ժամանակ, ըստ երևույթին, չի էլ զբաղվել կրոնական ու եկեղեցական վեճերով: Մեզ հասած աղբյուրներից հայտնի է, որ հայ եկեղեցին պաշտոնապես ու որոշակի առաջին անգամ Քաղկեդոնի ժողովով զբաղվել է 508 թվականին Բաբգեն կաթողիկոսի օրոք Դվին քաղաքում հրավիրված ժողովում⁶: Այստեղ էլ պաշտոնապես հայ եկեղեցին առաջին անգամ մերժում է չի ճանաչում Քաղկեդոնի ժողովի որոշումները:

6-րդ դարի սկզբներին հայերը նման եկեղեցական ժողովներ են գումարում որպեսզի վերջնականապես կողմնորոշվեն և միասնաբար գործեն բյուզանդական մեքենայությունների դեմ, որովհետև այդ ժամանակվանից սկսյալ բյուզանդացիների հակահայկական գործունեությունը հայկական այս գավառներում գնալով աշխուժանում է և նրանց ձեռնարկած երկարատև կրոնական հալածանքները լուրջ վտանգ են դառնում:

Թովմասը 536 թ. հալածանքի ժամանակ գլխավորում է հակաբյուզանդական շարժումը. նա հակաքաղկեդոնական տարրերին իր շուրջ հավաքելով դիմադրում է բյուզանդացիների կամայական որոշումներին. կուսակալը լուրջ հետևանքներից վախենալով՝ Թովմասին և իրեն համախոհ ղեկավարներին հրավիրում է իր պաշտոնատունը և փորձում է նրանց համոզել, որ հրաժարվեն իրենց գաղափարներից և ենթարկվեն կայսրի հրամանին կամ կամքին: Սակայն ներկաները միաբերան մերժում են. կուսակալը

դիմում է խորամանկության. մտածում է երկրից հեռացնել շարժման կազմակերպիչին՝ Թովմասին և այդպիսով քայքայել դիմադրողների շարքերը:

Հովհան Եփեսացին թեև գրում է, որ Թովմասը ի վերջո ավելորդ արյունահեղությունից խուսափելու համար իբր ինքնակամ աքսոր է գնում, բայց հավատացած ենք, որ իրականում նա ինչ որ դավադրության զոհ է գնում. նրան աքսորում են, և իր կողմնակիցներին հանգստացնելու համար է, որ լուրեր են տարածում, որ Թովմասը աքսոր «ինքնակամ» է գնացել: Այսպես նրան աքսորում են Եփրատի ափին գտնվող Կլավդիաս քաղաքը, 536 թ. վերջերին:

Երեսուն երկար տարիներ, մինչև 566 թ. աքսորավայրում մնալուց հետո Թովմասը ազատվում է և հայրենիք գնալու փոխարեն գնում է Կոստանդնուպոլիս: Թովմասի աքսորից ազատումն ու Կոստանդնուպոլիս գնալը պատահական չէր և այն կապված էր կայսրության որդեգրած նոր քաղաքականության հետ:

Թովմասը աքսորից հետո Կոստանդնուպոլսում երկար չի ապրում և շուտով մահանում է ու թաղվում Մար Մամա վանքում, որը միաբնակների վանքերից էր:

Այսքանով վերջանում է Թովմասի վարքը. այժմ երբ ընդհանուր գծերի մեջ նրա կյանքին ու գործունեությանը ծանոթանում ենք, տեսնում ենք, որ նա եղել է իր ժամանակի խոշոր գործիչներից, հակաբյուզանդական ու հակաքաղկեդոնականության խոշոր ներկայացուցիչներից մեկը: Տարօրինակ է, որ այսպիսի մեծ գործչի անունը չեն հիշատակել մեր մատենագիրները⁷ և բարեբախտաբար Հովհան Եփեսացու գրչի շնորհիվ ոչ միայն նրա հիշատակը, այլ նաև գործունեության պատմությունը պահպանվել է և հասել մեզ: Հովհան Եփեսացին լինելով եկեղեցիների միության կողմնակից, աշխատել է մեղմ գույներով նկարագրել այն հակասություններն ու վեճերը, որոնք իր ժամանակ ալեկոծում ու քայքայում էին կայսրության հիմքերը, սակայն մեղմ այդ գույներն անգամ չեն կարողացել իրականությունը ամբողջությամբ շղարշել և փաստորեն այժմ Թովմասի վարքի շնորհիվ ծանոթանում ենք 6-րդ դարի առաջին կեսին բյուզանդական Հայաստանում ծավալված հակաբյուզանդական պայքարի գեղեցիկ մեկ դրվագին:

⁷ Մեր մատենագիրները չեն իմացել Թովմասին, գուցե նրա համար, որ նա չի գործել բուն Հայաստանում:

⁶ «Գիրք թղթոց», էջ 42:

Ասորական մատենագրության խոշորագույն դեմքերից Հովհան Եփեսացուն⁸ դեռևս 55/ թվին գրել է «Հալածանքի պատմություն» անուանվ մի գիրք, որը դժբախտաբար մեզ չի հասել: Եւզ հասած նրա հայտնի աշխատություններից է «Եկեղեցական պատմությունը», որը սկսում էր Հուլիոս Կեսարի ժամանակաշրջանից և հասնում մինչև հեղինակի կյանքի վերջին տարիները. այս երկը, որն երեք մասից էր բաղկացած, ամբողջությամբ չի պահպանվել. հասել է մեզ միայն 3-րդ մասը, որն ընդգրկում էր 6-րդ դարի իրադարձությունների պատմությունը: Եկեղեցական պատմության այս երրորդ բաժինը կարևոր արժեք ունի նաև հայերիս համար, որովհետև այստեղ կան բազմաթիվ տեղեկություններ հայերի և Հայաստանի մասին. հատկապես նա մանրամասն տեղեկություններ է տալիս պարսկական բռնակալության դեմ 571 թվին հայերի բարձրացրած ապստամբության մասին: Պարսիկները ինչպես նախորդ դարերում, այնպես էլ 6-րդ դարում շարունակում են իրենց նախկին հայահալած քաղաքականությունը, հայերին վերջնականապես քաղաքական ինքնուրույնությունից զրկելու ու նրանց զինվորական ուժը թուլացնելու համար: Այդ նպատակով էլ, երբ 550 թ. մահանում է հայ մարզպան Մծեծ Գևորգին, պարսիկները, օգտվելով առիթից, նրա փոխարեն Հայաստանի մարզպան են նշանակում պարսիկ Սուրենին: Սա իշխանության գլուխ անցնելուց հետո ծանրացնում է հասարակական բոլոր խավերից ստացվող հարկերը: Հարկային այս քաղաքականությունն և մահավանդ հայ նախարարների ու հոգևորականության իրավունքների սահմանափակումները, դժգոհությունը այն աստիճան են ուժեղացնում երկրի ներսում, որ պատճառ են դառնում 571 թվի ապստամբության: Ապստամբության առիթ է ծառայում այն, որ պարսիկները փորձում են Դվին քաղաքում ատրուշան կառուցել: Հայերը նախ աշխատում են համոզել մարզպանին, որ նա հրաժարվի այդ մտադրությունից, բայց երբ այս

փորձը օգուտ չի տալիս, այն ժամանակ հայերը Կարսի Կարդաս Բ. Սասրկույանի գլխավորությամբ զսպար են դիմում և ազատ սկզբում որոշ հաջողություններ են ունենում:

Հովհանը այս դեպքերը նկարագրելուց հետո գրում է, որ թեև ըսքը ականատես չի եղել իրադարձություններին, բայց հայոց կաթողիկոսը՝ ասապար իրան պատուել է այս բոլորը, որը եկել էր Կոստանդնուպոլիս: Հայոց կաթողիկոսը 571 թ. ապստամբության ժամանակ գնացել էր Բյուզանդիայի մայրաքաղաքը, որպեսզի կայսրին հասոգի, որ նա օգնի հայերին պարսիկների դեմ մղած կռիվներում: Հայոց կաթողիկոսը ըստ երևույթին կայսրից բացի դիմել է նաև Հովհան Եփեսացուն, որն այն ժամանակ որպես միաբնակների ղեկավարներից մեկը մեծ հեղինակության էր արժանացել: Զգիտենք անշուշտ Հովհանը ինչպիսի օգնություն է ցույց տվել հայերին Կոստանդնուպոլսում, բայց նրա գրած ջերմ խոսքերը այդ կապակցությամբ ցույց են տալիս, որ նա համակրանքով է մտնեցել հայոց հարցին:

Հովհան Եփեսացու «Եկեղեցական պատմությունից» բացի մեզ է հասել նրա «Վարք արևելյան սրբոց» աշխատությունը. նա այս գիրքը սկսել է շարադրել 566 թ. և ավարտել է 568 թ.: Այս գրքում հեղինակը գրել է 58 այնպիսի եկեղեցական գործիչների կամ անձնավորությունների մասին, որոնցից շատերին անձամբ ինքը ծանոթ է եղել և այդ պատճառով էլ այս աշխատությունը մի տեսակ անձնական հուշերի տպավորություն է թողնում, և որովհետև Հովհանը իր կյանքի ընթացքում համարյա միշտ ճանապարհորդել է, իր գտնված վայրերում բեղուն գործունեություն ունեցել, բազմաթիվ մարդկանց հետ է շփվել կամ համագործակցել և հետագայում ահա իր այդ հիշողությունները գրի առնելով շարադրել է վերոհիշյալ այս գիրքը, որը արժեքավոր է նաև այն տեսակետից, որ իր մեջ պարունակում է ինքնակենսագրական բազմաթիվ տեղեկություններ: Այս գրքից իմանում ենք, որ Հովհան Եփեսացին ծնվել է 507 թ. հայկական Անգեղատուն գավառի Անգեղում ապրող ասորի մի ընտանիքից. հայտնի է, որ Հայաստանի հարավային այս շրջաններում հայերից բացի ապրում էին նաև ասորիներ: Դեռ փոքր հասակից Հովհանի ծնողները իրենց որդուն հանձնել են Անգեղի մոտակայքում գտնվող

⁸ Հովհան Եփեսացին ծնվել է 507 թ. Անգեղում (Ingilene), որը 6-րդ դարի Հուստինիանոս կայսեր մտցրած վարչաքաղաքական փոփոխության պատճառով մտավ «Չորրորդ Հայքի» կազմի մեջ: Անգեղտուն գավառի գլխավոր բերդն Անգեղն էր, որը հանդիսանում էր Անգեղյան նախարարների ուստանը: Հովհանին «Եփեսացի» կամ նաև «Ասիացի» պատվանունը տրվել է նրան եպիսկոպոսական աստիճան ստանալուց հետո, որպես տիտղոս:

⁹ Սա Հովհանն է Բ. Գաբելյան կաթողիկոսն էր, որը գնաց Կոստանդնուպոլիս և այնտեղ էլ մահացավ 578 թ. վերջերին կամ 574 թ. սկզբներին: Տե՛ս, Մ. Օրմանյան, Ազգապատում, հոտ. Ա, մասն Բ, Պեյրուս, 1959, էջ 566:

Մարտ Սյունակեցու վանքը¹⁰։ Նա սակայն շուտով այնտեղից տեղափոխվում է Ամիդ թաղաքի մոտ Հովհան Ուրտայեցու հիմնադրած վանքը¹¹։ Սակայն վանական կյանքը չի բավարարում նրան և նա սկսում է ճանապարհորդել։ 532 թ. նա իր Թովմաս և Ստեփան ընկերների հետ գնում է Անտիոք։ 534 թ. այստեղից անցնում է Եգիպտոս։ 535 թ. նրան տեսնում ենք Կոստանդնուպոլսում։ 536 թ. վերջերին և 537 թ. սկզբներին երբ Անտիոքի պատրիարք Եփրեմը կրոնական ժողովի անվան տակ հավաքում է իր համակիրներին և «միաբնականներին» դատապարտելուց հետո սկսում է հալածել նրանց, հայրենիք վերադարձած Հովհանը չի դիմանում ճնշումներին և ստիպված 539 թ. հեռանում է և գալիս Եփրատի ափին գրտնըվող Կլավդիաս վայրը, այսինքն ճիշտ այնտեղ, որտեղ որ աքսորվել էր Թովմասը։ Այստեղ Հովհանը հանդիպում է «միաբնականների» նախկին ղեկավարներից հայ Թովմասին և նրա հետ կապերը ամրացնում։ Այս կապերի ամրացման արդյունքը լինում է այն, որ Հովհանը իր «Արևելյան սրբերի Վարքի» 21-րդ գլուխը նվիրում է Թովմասի կյանքին ու գործունեությանը։ Սակայն Հովհանը երկար չի մնում Եփրատի ափին ու վերադառնում է Կոստանդնուպոլիս։ 542 թ. կայսրը Հովհանին պատվիրակ է նշանակում և ուղարկում Փոքր Ասիայի խորքերը, որպեսզի նա այնտեղ ապրող հեթանոսներին քրիստոնեություն քարոզի¹²։ Այս առաքելության կազմակերպումը ըստ երևույթին մի միջոց էր վտանգավոր այս գործչին մայրաքաղաքից հեռացնելու։ 566 թ. նա նորից է վերադառնում Բյուզանդիայի մայրաքաղաքը, այս անգամ սակայն եպիսկոպոսական աստիճանով։ Այս ժամանակ արդեն պաշտամունքը փոխվել էին Կոստանդնուպոլսո պատրիարք Թեոդոսիոսի մահից հետո, և արքունիքում վերաբերմունքը փոխվել էր նաև դեպի միաբնականները. կայսրը հասկացել էր, որ կրոնական հալածանքներով հնարավոր չէ եկեղեցական միություն ստեղծել, ուստի սկսել էր հաշտության եզր. որոնել ու այդ նպատակով սիրաշահել հակառակորդներին։

Հովհանը Կոստանդնուպոլսի «միաբնականների» շրջապատում մեծ հեղինակություն է ձեռք բերում և հետևաբար կայսրը և հատկապես Թեոդորա թագուհին այդ պատճառով հատուկ ուշադրության են արժանաց-

նում նրան և նա դառնում է վերջինիս մոտիկ սիրելին։ Հովհանը մեծակ անշուշտ չէր կարող հանդես գալ միաբնականների անուհից. անհրաժեշտ էին նաև որոշ հեղինակություն ունեցող անձնավորություններ, որոնց միջոցով հնարավոր լիներ կայսրի կամ արքունիքի ցանկացած եկեղեցական միությունը կազմակերպել և հավանաբար այդ նպատակով էլ ազատվում են նախկինում աքսորված «միաբնակ» գործիչները. անկասկած Հովհանի թելադրանքով ազատվում է նաև Թովմասը և հրավիրվում Կոստանդնուպոլիս. Թովմասը գալիս է, բայց արդեն երեսուն տարիների աքսորը քայքայել էր նրա առողջությունը և նա այստեղ մահանում է։

Այս բոլորը իմանում ենք Թովմասի վարքից. «Արևելյան սրբերի վարքը» այն բախտավոր աշխատություններից է, որի ամբողջական մի օրինակը պահպանվել է 688 թ. գրված ասորական մի ձեռագրում և այն այժմ գտնվում է Բրիտանական թանգարանում (Add. 14647)։ Կան նաև այլ ձեռագրեր որոնք սակայն այս գրքի լրիվ բովանդակությունը չունեն։ Վերոհիշյալ ձեռագրերի մանրամասն ուսումնասիրությունը տվել է իր առաջաքանում, ասորերեն այս բնագրի հրատարակող ու անգլերենի թարգմանող Բրուկսը¹³։

Այսպիսով մեզ է հասել Հովհան Եփեսացու այս աշխատության շատ լավ պահպանված օրինակը, և այս հանգամանքը հնարավորություն է տալիս ավելի ճիշտ գնահատել այն։ Հունական գրականության ու լեզվին քաջաձանոթ հեղինակը կարողացել է հունական մտքի ճշգրիտ մտածողության ձևերը միաձուլել ասորական գրականության յուրահատուկ բարձր երևակայության ու գունագեղ պատկերների հետ և ստեղծել իր սեփական ոճը. այս տեսակետից «Արևելյան սրբերի վարքը» կարելի է ներկայացնել նաև որպես 6-րդ դարի ասորական գրականության գեղեցիկ նմուշ. Թովմասի Վարքը ևս գրված է նույն շնչով ու վարպետությամբ. ներկայացնում ենք Թովմասի Վարքի մեր թարգմանությունը, որը կատարել ենք բնագրից, օգտվելով նաև անգլերեն թարգմանությունից։

(Վարքի հայերեն թարգմանությունը)

Հետո 21-րդ պատմություն «Հայաստանից (եկած) մեծն երանելի Թովմասի Վարքը, որն իր կնոջ և երեխաների հետ (հրաժարվեց) իր մեծ հարստություններից և դարձավ հոգով աղքատ.

Հետևապես, սուրբ Թովմասի հիմնադիր Վարքի պատմությունը ինձ թվում է, որ խորք չի լինի այս

¹³ John of Ephesus, Lives of the Eastern Saints, pp. VII—XII.

¹⁰ John of Ephesus, Lives of the Eastern Saints, p. 64.

¹¹ Նույն տեղում, էջ 207—211։

¹² Michel le Syrien, La Chronique, ed. J. B. Chabot, Paris, t. I, 1899—1900, p. 287.

ստորերի վարքերի շարքին (դնել) եթե անգամ շրջանցենք նրա կյանքի վերջին (տարիների) մեծ գործունեությունը. աստվածային գործերի նկատմամբ նրա ունեցած նախանձախնդրությունն ու խստամբերությունը և երկրավոր մարմնի ինքնախարազանման, մի մարդ որի հետ նրա (Քրիստոսին) աշակերտելուց հետո, մոտ երեսուն տարի հաճելի և հոգեկան կապի մեջ եմ եղել:

Այս ստորի հայրը, որի անունը Օնգին էր, նախկինում մեծ, հայտնի և երևելի մարդ էր թագավորների առաջ, և երկար տարիներ նա Ասորիքի և Հայաստանի աստրալան էր և թագավորներն ու բոլոր իշխանները լուր էին նրան և հարգում, այնպես որ այս մարդը դարձավ անշաղի հարուստ և մեծ և (ունեցավ) շատ ոսկի և արծաթ, ընդարձակ հողեր և շատ ստրուկներ. երբ իր ունեցած դաշտերն ու անտառներն, այգիներն ու խոշոր բարձր շինությունները աղոյախի մեծ չափերի հասան, այն ժամանակ նա իր հարստությանը ու արծաթեղով Արևելքում եղածների մեջ շատ բարձր տեղ գրավեց: Այսպես, այս մարդը իր (Թովմաս) որդուց բացի ուներ նաև մի եղբայր, որն իրեն մեծ հայտնի ու երևելի էր թագավորների առաջ: Նա մեծ ուշադրություն դարձրեց իր (որդու) վրա, որպեսզի նա կարողանա ստանալ, հունական իմաստությանը լավագույն հնարավոր կրթությունը (ու այդ նպատակով) նրան տեղավորեց Բերիտիսի (այժմյան Բեյրութ—Լ. Մ.), Անտիոքի և այլ տեղերի (դպրոցներում) և դրա համար էլ, իր ունեցած բարձր դիրքի համապատասխան մեծ գումարներ ծախսեց, նախկինում նա երկար տարիների ընթացքում ստացավ փայլուն ու խելացի կրթություն, մանավանդ ինքն էլ իր նկարագրով ուշիմ էր:

Եվ երբ ժամանակը եկավ և նա իր ուսումը ստացավ և ուներ արդեն առաջին աստիճանի կրթություն, հայրը սկսեց նրան ծանոթացնել իշխանության գործերին, որովհետև որոշված էր, որ իսկապես նա ընդունի մեծ աստրալության պաշտոնը. և մինչդեռ նա (հայրը) այս ծրագրերն էր մշակում, մահացավ «Ելլայն աուր»,—ինչպես գրված է,—կորիցեն ամենայն խորհուրդք անցա¹⁴: Եվ որովհետև արդեն եղբայրն էլ մահացել էր, իր որդին մնաց (հոր փոխարեն) տան և պաշտոնի վրա. և ինքը (Թովմասը) սկսեց խորհրդածել և ասել. «Իմ հայրը, որը ձեռք ձգեց այս փառքն ու մեծությունը, ունեցվածքն ու հարստությունը, թողեց ամեն ինչ և տուն, և հարստություն, և ունեցվածք, և իշխանություն և իր հետ տարավ միայն մեղքերը. հետևապես այժմ եթե ես մնամ ու իմ հոր ունեցվածքը, ինչպես ինքն արեց, նույն չափով և գուցե նույնիսկ հազար անգամ ավելացնեմ, միևնույն է մեռնելու եմ հորս նման և այն կլինի որիչների և կամ այնպիսի մարդկանց սեփականություն, որոնք անառակ, չար և շնացող են և այն կվատեն վատ ձևով, և ինձ դրանից կհասնի միայն դժոխք և հավիտենական տանջանք, մանավանդ, որ այս բոլորը կուտակվել է ոչ թե արդար կամ իրավացի ճանապարհով, այլ աղքատին կո-

ղոպտելով ու խաբելով: Եվ այժմ, ինչո՞ւ եմ ձգտում իշխանության կամ աստրալի պաշտոնին, որն անցողիկ ու կործանիչ է, և այն ունեցողներին, վատ վերջավորությունից, դատաստանից և տանջանքից բացի ոչինչ չի տալիս: Ուստի կգնամ իշխանության ներկայացուցիչների մոտ և նրանց կհանձնեմ իրենց աստրալի պաշտոնը և ինձ համար բավական է նրանով իմ տանը և հոգեկան հանգստի մեջ փառավորել Աստծուն. և ինչ որ ունեմ երկար ժամանակ կրավականացնի ինձ և երեխաներիս: Նա (հայրս) ամուսնացել էր այնպիսի մեծ և հռչակավոր ցեղից մեկի հետ, որն հայտնի է Արշակունի անունով և ինչպես ասում եմ, այն ազնվական թագավորական ցեղ էր: Սկզբում մեծ մտքեր ծագեցին Երանելի այս անձնավորության մոտ և նա սկսեց իրագործել իր այս մտածմունքները և անհապաղ գնաց ուղիղ թագավորական քաղաքը¹⁵ և խնդրեց թագավորին, որ սա հետացնի իրեն պաշտոնից. բայց թագավորը շարունակեց պնդել. որ նա փոխարինի և մնա իր պաշտոնին. ասվածն էր (Թովմասը) աղերսեց և ասաց. «Եթե Ձերո մեծության ծառան գույք է գտել քեզ մոտ, ապա հրամայի ինձ քո իշխանության մեջ մտնող իմ տանը միայն հանգիստ ևստեմ, քանի որ ես իսկապես արծաթի չեմ իշխողի դիրքում լինել, և ինչո՞ւ ես պետք է ինձ և որիչներին ղեկավարեմ և մեղք գործեմ: Եվ թագավորը զարմանալով նրա խոսքերի վրա չստիպեց նրան և հրամայեց, որ նրանից ընդունեն (պաշտոնը), և ազատեց նրան: Եվ այսպես նա ազատվեց և գնաց իր տունը ուրախությամբ փառաբանելով Աստծուն և ասելով. «Այժմ երբ Աստված փրկեց ինձ ավազակությունից, և հոգում ու խնամում է ինձ, ես էլ կծառայեմ ինձ, իմ տան և ունեցվածքի համար և գործերս կվարեմ կրոնական ոգով, և բացի այդ կհիշեմ հորս, որն իր կյանքն այս խաբեքա աշխարհում դատարկությամբ անցկացրեց և հավաքեց այս բոլորը ինձ համար: Եվ որպեսզի իմ և նրա հոգին փրկվեն, մանավանդ որ ես գիտեմ, որ նա մեծ անարդարություն կատարեց, ես իմ կողմից որպես ողորմություն կբաշխեմ այդ գումարը, որը նա հավաքեց, որպեսզի ի վերջո նա մի փոքր ողորմություն ստանա դատաստանի օրը¹⁶: Եվ այդ ժամանակվանից հետևապես նա սկսեց իրագործել նույն այս բաները, և նա սովորական ձևով չտվեց կամ չգործեց, ինչպես այլ մարդիկ կատարում էին, այլ նա (գումար) ստացողի առաջ անձամբ չդրեց իր և լացով ու պաղատանքով խնդրում նրան, որ նա խնդրի Աստծուց, որ ընդունելի լինի իր ցանկությունը և փրկվի նույնպես նա՞ն իր հայրը. նա ասում էր. «Դուք իմ եղբայրներ, ավազակությամբ ու անարդարությամբ չեք զայրացրել Աստծուն, ուստի մեր փոխարեն աղերսեք Նրան մեզ համար որոնց թույլության սահման չկա, որ նա (Աստված) հաշտվի և թաա մեզ Մեծ օրում¹⁷: Եվ նույնիսկ այն ինչ որ տալիս ենք գալիս է աղքատների հոգու, չքավորների,

¹⁴ Սաղմոս ԾԽԵ (ԾԽԶ), 4:

¹⁵ Կոստանդնուպոլիս:

¹⁶ Խոսքը վերջին դատաստանի մասին է,

¹⁷ Վերջին դատաստանին:

որքերի և այրիների արյունից: Երբ մա մման բաներ էր անում երկար ժամանակ, ամեն մեկը զարմանում էր մրա վրա և խնդրում Աստծուն, մտածելով, որ այնպիսի դաժան և հափշտակիչ հայրը, ինչպես է ծնել այսպիսի արդար, վեհաճառ և ողորմած որդի: Բայց, մինչև մա բաշխում էր բազում ողորմություններ բոլոր կարողություններին, այդ ընթացքում իր մտքերն էլ գովելի առաջադիմություն էին ստանում, այնպես որ մա սկսեց չարչարանքով, ծոմապահությամբ և անվերջ աղոթքներով հաստատ ապաշխարել և հակառակ խիստ փափկության և քնքշության մա կերակրվում էր միայն հացով և աղով, և աստիճանաբար մրա մտքերը այնքան զարգացան, որ հասան այն գիտակցության, որ ինքը ծախի իր ունեցվածքը և տա կարիքավորներին, և ինչպես մեր Տերն է հրամայել մա և վերցնել խաչը և հետևել մրան¹⁸: Եվ մա չուշացավ այս ևս իրագործելու և դրա համար էլ անմիջապես լուր ուղարկեց իրեն հարևան իշխաններին և հայտնեց, որ եթե ուզում են թող գնեն իր հողերը, որոնք (հասնում են) մրանց սահմաններին, ապա թե ոչ չվիրավորվեն եթե դրանք վաճառի օտարականներին: Եվ երբ լուրերը ստացվեցին, մման դրան, որը մեր Տերն է ասում առաջին «մարդ, որը դաշտում գանձ է գտնում իր ամբողջ ունեցվածքը վաճառում է այդ դաշտը գնելու համար¹⁹ և մրա մման, որն անհամբեր իր ամբողջ ունեցվածքը ուզում է վաճառել գնելու համար այդ հրաշալի և ընդարձակ դաշտերը, այնպես էլ լուրաքանչյուրը շտապում էր առաջինը գնելու, մանավանդ, որ մա (հողերը) բարձր չէր գնահատում, և կարճ ժամանակում մա վաճառեց իր մեծ կազվածքը չընկրկելով մուգնիսկ շենքերի գեղեցկությունից և ոչ էլ ընդարձակ պալատներից, որոնք ցույց էին այս հողերի վրա, և ոչ էլ բազում անտառների և այգիներից, որոնք (լիքն էին) զանազան մրգերով, և ոչ էլ պարտեզների և խաղողի այգիների հարստությունից, և ոչ էլ խաղողի այգիների հրապուրիչ ոռոգումից, այլ ճիշտ այն մարդու մման, որ գինուց է հարրում, այնպես էլ մրա հոգին Աստուծով էր հարբել. և այսպես ցրեց իր բոլոր ունեցածը իր (այս) փրոտ տեղանքից (տարված): Եվ այնուհետև զբաղվեց իր մնացած ունեցվածքի և ժամանակավոր իրերի բաժանումով, որպեսզի դրանք չխանգարեն իրեն, այդ նպատակով էլ ինքն իրեն մկիրեց կարիքավորներին, թշվառներին, պահանջատեր ունեցողներին, եկեղեցիներին, վանքերին մեծ չափի մկիրատվություններ անելով և անահամարեն բաշխեց իր ունեցվածքը և այդ (կատարեց) այնպիսի ձևով, որ եղածը անհասկանալի մնար և խոսակցության առարկա չդառնար: Նա իր և ընտանիքի օգտագործման համար մի ամբողջ վանք կառուցեց, որտեղ մեծն ու փոքրը, իր կինն ու երեխաները, ծառաներն ու շատ ազատ մարդիկ, որոնք կապված էին իրեն, կարող էին միանալ իրեն (վանքում) եթե խոստանային վաճառականության ազնիվ լուծը տանել միասին, և մրանք աղոթեց էլ արեցին:

¹⁸ Մատթեոս, ԺԺ, 21:

¹⁹ Մատթեոս, ԺԳ, 44:

Եվ մա երկու տեղ պատրաստեց, մեկը իր և այն տղամարդկանց համար, որոնք իրեն հետ էին և մյուսը կնոջը և մրա հետ եղած կանանց համար և այսպես մա հավաքեց մա որոշ հայտնի, երևելի և երանելի մարդկանց, որոնք եկան հսկում և աղոթք կատարեցին և (ապա) բացատրեցին ու սովորեցրին կրոնական ու վաճառական կյանքի ձևերն ու կարգերը: Եվ իր կինը մույնպես (մարդ) ուղարկեց և իրեն համար գտան երկու մեծ և սուրբ կանանց, որոնք կապաղովկայից էին և մրանք (եկան) ու ապրեցին իր հետ. (ապա) մրանք իրեն, իր միակ դուստրին և իր հետ եղած կանանց սովորեցրին կրոնական կարգ ու կանոն: Եվ այնուհետև բոլոր երանելի (այս) մարդիկ իրենք իրենց ենթարկեցին ու դրեցին ճգնաժամության խիստ և ծանր բեռի տակ և հսկումով ու ժուժկությունամբ տարան (դժվարությունը) որպեսզի սանձեն իրենց մարմինների աշխարհիկ անահանական բնագոյներն ու աշխարհիկ իրերի փոխարեն ձեռք բերեն հեզություն, պարկեշտություն ու հավատ. և այսպիսով մրանց գործունեության ու ճգնության մասին լավեց ամեն տեղ: Այնուհետև շատ ազնվականներ և երևելի ազնվականների զավակները հիանալով այս երանելի մարդու արածի վրա, ուզում էին մրան մմանել և մրա մման արհամարհել ամբողջ աշխարհը. (սրանցից) ոմանք ձգտում էին գալ իր մոտ և կարգ ընդունել իսկ ուրիշներ շտապում էին երկրում [եղած] հայտնի այլ վանքերը, և շատերը այդպես էլ արեցին: Եվ այսպես այս երանելի մարդը բոլորի համար դարձավ մեծ և գեղեցիկ տեսիլ (օրինակ): Այնուհետև մա որոշեց, որ այլևս չհանգստանա և գլուխը չդնի բարձին հանգստանալու համար այնքան ժամանակ, որ հնարավոր լինի (այսինքն) շատ անհրաժեշտության դեպքում միայն իր մարմնին ջուր լցնել կամ յուղով օծել և աղապես էլ արեց մինչև տասը տարի, երբ արդեն ոտքերը ծանր պոկների մման հաստացել և սևացել էին ու սկսել էին մեծ քանակությամբ թարախ արտադրել, և (այն վիճակին էին, որ) կարծես իրը չէին. (մարմինը) ծածկվեց մեծ վերքերով իսկ ինք չէր էլ մտածում մուգնիսկ դրանք թարախից մաքրել և սպեղանի դնել: Հաճախ ասում էինք մրան «Եթե դու մտածում ես քաջագործություն ցույց տալ, ապա պետք է (ման) պաշտպանվես. եթե դու չխնամես քո այս վերքերը, այն ժամանակ դու կմահանաս». բայց մա զարմացած նայում էր մեզ ասելով. «Եթե այս ոտքերը դեղերով օծվեն և շատերի կողմից մեծ խնամքով շփվեն ու մաքրվեն, ապա մեկը կարող է գալ և ասել. «Մրանք բաւական ունեն, այժմ թող վճարեն իրենց արտաքին տեսքի համար, որով փառավորվել են, ապա թե ոչ դրա համար կարող են վարձատրվել դժոխքում: «Եվ այսպես հիացած մրա ողջամիտ իմացականությունից, վերջ էինք տալիս խնդրին: Այլ փորձառությունների ու ծանր ճգնությունների մասին, որոնք ոչ միայն իրենք, այլ ման մյուս աշակերտները, և իր կինն ու երեխաներն էին տանում, մեք չենք կարող դրանց նկարագրության պատմությունը անել, որովհետև մրանք իրենց (ապրելակերպով) գերազանցեցին մարդկային արարածներին: Եվ մի հանգամանք ևս, որը շատ հիա-

նալի է և մեծ. դա այն է, որ նրանք սկզբից, առաջի օրից իսկ, երբ սկսեցին (այսպես ապրել), յուրաքանչյուրը գիտեր նաև իր վերջին օրը՝ իր վախճանը (և այդ պատճառով) նրանք չէին անհանգստանում իրենց կյանքի (մարմնի) թուլացումից, վատթարացումից և ոչ էլ հիվանդություններից և կամ ամառվա ծանր շոգերից: Բայց Երանելին որովհետև շատ ծամանակ էր տրամադրում ընթերցանության, միտք հղացավ (մտածեց) հայրերի որոշ գրքեր ձեռք բերել և այդ նպատակով ճանապարհորդեց իր երեք հետևորդների հետ դեպի Մեծն Ալեքսանդրիա և կապի մեջ մտավ շատ սուրբ եպիսկոպոսների և ուրիշների հետ, որոնք հալածանքի պատճառով հավաքվել էին այնտեղ²⁰ և նա ավելի ևս ամրացավ հավատքով և ճգնության: Եվ նա իր հնարավորության ու կարողության չափ գնեց մոտ 5 թեռ²¹, բոլոր հայրերից հայտնի շատ գրքեր և նույնիսկ Ուրբայից գնեց մոտ հարյուր տիմարի համեմ և վերադարձավ առաքինության օրինակներով զինված: Եվ այսպես, այնուհետև գիշեր և ցերեկ հաստատորեն զբաղվեց անփոփոխ և արարողության ժամանակ հաճախադեպ կրկնվող աղոթքներից բացի նաև հայրերի գրքերի ընթերցանությամբ, որոնք պարունակում էին մեկնություններ, խրատներ և վարդապետություններ, այնպես որ որսնից հետո իր միտքը լուսավորվել էր արևի մեծ: Տասներկու տարի հետո, որի ընթացքում Երանելին իր ամբողջ վանքի հետ հայտնի էր դարձել, Հայաստանի նույն այս շրջանում տարածվեց հերետիկոսական հալածանքի ծովը. այս բաների հրահրողն ու չարագործը նմանվում էր նախատիպառ հակաքրիստոսին, որը գրավում էր այդ ժամանակ Անտիոքի պատրիարքությունը, և, որի անունը Ամիդի Ապիանոսի որդի Եփրեմ էր, որն անձամբ նախօրոք ցույց էր տալիս և (ասում էր) այն ամենը, որը պետք է տեղի ունենար կեղծ Քրիստոսի կողմից աշխարհի վերջում: Այս մարդու եղբայրը այն ժամանակ Հայաստանի և Ասորիքի կուսակալության իշխանությունն էր վարում, այն որ նախապես երանելի Թովմասին (պաշտոնն) էր²²: Այս մարդը դաժան հալածանք սկսեց Հայաստան աշխարհի բոլոր հավատացյալների դեմ և այդ պատճառով քրեապիսկոպոսները, վաճառադրերն ու գյուղերի քահանաները հավաքվեցին երանելի Թովմասի մոտ որպես ուսուցիչ. գիտակ մարդու, որպես մարդկանց առաջնորդի առկա էր որ մի մեծ խումբ, մոտ հինգ հարյուր մարդ հավաքվեցին ասելով. «Ինչ որ նա հրամայի, մենք կկատարենք»: Սակայն առ բաները խիստ առեղծվածային առաջադրեցին Թովմասի դեմ և նրանք (թշնամիները) ասում էին. «Նա գլխավորն է և օրինակ է (հանդիսանում) բոլոր նրանց, որոնք այս երկրում են ապրում,

որ մեր դեմ ապստամբվեն: Հետո երբ նրանց ժողովի (այսինքն Թովմասի կողմնակիցների) մասնակիցների թիվը հասավ ութ հարյուրի, այն ժամանակ նրանք հրավեր ստացան, (որ գնան) կուսակալի պաշտոնատունը, որպեսզի կարողանան մի երկու (հարց) լուծել և կամ վավերացնել փողկետոնի ամբարիշտ ժողովը, ապա թե ոչ, հետևանք երկրից: Բայց նրանք երբ եկան և կանգնեցին դատավորի առաջ և երբ նրանցից պահանջեցին, որ կատարեն այս բաները, բոլորը, ինչպես Երանելին էր սովորեցրել, բացակալեցին. «Մենք չենք հրաժարվում Քրիստոսից, բայց և չենք խոստովանի կամ ընդունի յորորդություն սուրբ Երրորդության փոխարեն: Թող մեզանից հետո լինի ուրացողների հետ գործակցությունը: Ամբողջ այս մեծ խմբի կողմից վերջնականապես ասված այս բարձրաձայն խոսքերի վրա, հալածիչն ու դատավորը և լսողները ահաբեկվեցին և դողմ ընկավ բոլորի վրա, (որովհետև) բացակալության ուժգնությունից ձայնը հնչում էր մեծ որոտումի նման և երբ հալածիչը տեսավ, որ «Եթե ոչ նախ կապիդե՞ գեղօրն, ես ապա զտունն նորա յափշտակիցեմ»²³, ուստի ծրագրեց այս ամբողջ խմբի փոխարեն, ամբողջ ուժով պաշարել Երանելու դեմ, և ասաց նրան (Թովմասին) «բոլոր այս բաները քո արածն են, և եթե բոլոր այս մարդիկ քո պատճառով մահանան, ապա դու հակառակության մեջ կընկնես թագավորի հետ. այն ժամանակ դու միանգամից պետք է քեզ պաշարի պատրաստես: «Բայց Երանելին, որը հավատք և ուժ ուներ, ասաց նրան «ավա՛ղ, դու ուզում ես ինձ խեղճացնել, բայց ես չեմ վախենում քո խոսքերից և քո ճառերը ոչ մի նշանակություն չունեն ինձ համար, և ոչ էլ Քրիստոսի հավատքի խնդրում ես հաշվի կհանեմ թագավորի կամ քեզ և կամ այս աշխարհում ապրողներից որևէ մեկի հետ: Մի գուցե և որովհետև ես ապրում եմ այս երկրում կամ վաղրում և դու ուզում ես ինձ արտաքսել այստեղից, (այն ժամանակ) ես ինքնակամ կհեռանամ այս երկրից որպեսզի դու իմանաս, որ ես ոչնչով կապված չեմ, բազի իմ Աստված Քրիստոսից, որի անունով էլ ես փրկված եմ: Նա (կուսակալը) ասաց նրան. «Եթե դու քեզ հարգում ես և չես ուզում քո պատճառով արյունահեղություն լինի ամբողջ այս երկրամասում, ապա հետագիք այստեղից: Եվ երանելին ուրախությամբ հաճեց առավ մեկնել, ասելով. «Եթե ես մեղավորս պետք է հալածվեմ իմ Աստված Քրիստոսի մեծ անունով, ապա ես երբեք արժանի չեմ եղել այս պատվավոր մեծաշնորհին: Եվ այսպես նա մեկնեց երկրից բոլոր իր հետ եղածների հետ. նրանցից հետո մեկնեցին նաև ժողովի բոլոր մասնակիցները, ոմանք (գնացին) այլ երկրներ, ոմանք (քաղվեցին) դաժան և խիստ լեռները, և այսպես բոլորը իրենց տեղերում քաջաբար տոկացին ծանր և անգութ հալածանքին: Բայց Երանելին գնաց Կլավդիա կոչված վայրը, և այնտեղ գնեց մի հողամաս և այդ հողամասի վրա, Եփրատ գետի վերևում, բարձր լեռնային

²⁰ Դժվար է այս հալածանքի ճշգրիտ թվականը ասել, այն պետք է ընկած լինի 519—538 թթ. միջև:

²¹ Հավանաբար ձիու կամ ջորու թեռ նկատի ունի:

²² Այստեղ խոսքը վերաբերում է 538 թ. կամ 537 թ. սկզբներին տեղի ունեցող իրադարձություններին:

²³ Մատթեոս, ԺԲ, 29:

շրջանում կառուցեց մի քանի տնակներից երկու վանք մեկը՝ կանանց և մյուսը՝ տղամարդկանց համար, և այստեղ հետագայում [նրանք] հերոսաբար շարունակեցին իրենց գործունեությունը ընդունված սովորության համաձայն:

Երբ երեսուն տարին աքսորում ավարտվեց, մենք²⁴ այնուհետև հաճախ անձամբ գնում էինք իրեն մոտ մխիթարելու ցանկությամբ, իսկ նա իր արիությունն ու քաջությունն ղեկուս պահպանած ասում էր.

«Ես իմ կողմից պատրաստ եմ Բրիտանիայի սիրույն աքսորվել կամ մեռնել ոչ միայն մեկ անգամ, այլև եթե մարդու համար հնարավոր լիներ, տասը հազար անգամ և այդ նույնիսկ ինձ չէր անհանգստացնի: Եվ այսպես, դրանից հետո լեռների դաժան կյանքն ու բազմատեսակ զրկանքները թվում էին նրան որպես լայնատարած պարտեզների [կյանք]:

Երբ նա հասկացավ, որ խաղաղ առանձնարանում

կարելի է մեծ ուրախություն և հաճույք ստանալ, ուստի փայտերից իրեն համար պատրաստեց մի փոքր տնակ, և այնտեղ սկսեց կատարել իր մեծ ճգնությունն ու գաղտնի վարժությունները. բացարձակ օրենք էր դարձրել իրեն այն, որ հաց և զինի ճաշակի այն ժամանակ միսյն երբ անհրաժեշտությունը ստիպի և այսպես նա կերակրվում էր կանաչեղևով և մի քանի մրգով միայն, երբեմն երկու կամ երեք օրը միանգամ (ուտելով), և դրա համար էլ նրան շնորհվել էր գաղտնի տեսիլքի կարողությունը:

Եվ այսպես նա իր երեք որդիներից մարգում էր կյանքի այս մեծ եղանակով, և իր երանելի կինը, որը Մարիա էր կոչվում, նույնպես լծվել էր կյանքի նույն այս ձևին և ճգնության: Մինչ այդ էլ նա երբեք չէր հանդիպում իր երանելի ամուսնուն և ոչ էլ նույնիսկ իր որդիներին. և (այսպես) յուրաքանչյուրը անց էր կացնում իր հոգևոր ծառայությունը մենակ և միայնության մեջ: Եվ այսպես ամեն մեկը հիացած էր դրանց վրա և մտածում թե ինչպես անսահման հեզությամբ, ճգնության և զրկանքի [նվիրված] այս անձնավորությունները, որոնք մարդկանց աչքին թագավորներ էին թվում, ծնվել են. և դրա համար էլ նրանք փառք էին տալիս ու փառավորում Աստծուն:

Եվ նրանք հեռացան այս աշխարհից որպես կենցաղավարության սրբանշանի համբավ ունեցողներ և Երանելին (Թովմասը) մահացավ թագավորական քաղաքում և թաղվեց մեր սուրբ Մար Մամա վանքում, ջրի այն կողմը, իսկ իր երանելի կինը մահացավ նույն ժամանակ Հայաստանում:

Հայ ազգի երանելի Թովմասի և նրա կնոջ ու որդիների պատմությունը վերջացավ:

²⁴ Վարքի հեղինակ Հովհաննի մասին է: Վարքի բովանդակությունից երևում է, որ աքսորից հետո Թովմասը փոխադրվել է Կոստանդնուպոլիս և իր կյանքի վերջին տարիները անց է կացրել այդ քաղաքում: Հովհաննը նրան այցելում էր Կոստանդնուպոլսում: Այժմ 30 տարի. եթե Թովմասը աքսորվել էր 536-ին կամ 537-ին, ապա 30 ավելացրած հասնում ենք մինչև 566—567 թվականը: Սակայն Անտիոքի Եփրեմ պատրիարքը եկել էր դեպի արևելք 536 թ.-ին և նույն այս Վարքի անգլիկոսն թարգմանիչը ենթադրում է, որ Թովմասը վանական կյանքը սկսել է 524 թ.:

